ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք
Երկու հազար քսան թվականի փետրվարի քսանչորսին

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքը, հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ամասիա, ի դեմս համայնքի ղեկավար՝ **Ջեմմա Ժորժիկի Հարությունյանի,** ով գործում է կանոնադրության հիման վրա, որի անունից հանդես է գալիս լիազորված անձ՝ **Սամվել Մարտինի Էգնատոսյանը,** ծնված՝ 10.02.1962թ. /տասը փետրվարի հազար ինը հարյուր վաթսուներկու թվականին/, անձնագիր՝ AR0538811, տրված՝ 14.12.2017թ. 021-ի կողմից, բնակության վայրը՝ Շիրակի մարզ, Ամասիա, գ. Գտաշեն, 5-րդ /հինգերորդ/ փողոց, տուն 2 /երկու/, երկու հազար քսան թվականի փետրվարի քսանչորսին տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ Վարձատու, մի կողմից և

Հայաստանի Հանրապետության Կադաստրի Կոմիտեն, հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 7 /յոթ/, ի դեմս՝ Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ **Գոհար Ռաֆայելի Գրիգորյանի,** ով գործում է կանոնադրության հիման վրա, որի անունից հանդես է գալիս լիազորված անձ՝ **Վարդան Հրաչի Հարությունյանը,** ծնված՝ 19.06.1961թ. /տասնինը հունիսի հազար ինը հարյուր վաթսունմեկ թվականին/, նույնականացման քարտի համարը՝ 002190726, տրված՝ 10.06.2015թ. 021-ի կողմից, բնակության վայրը՝ Շիրակ, Ամասիա, 20 /քսան/ փողոց, տուն 3 /երեք/, քսանը փետրվարի երկու հազար քսան թվականին տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ Վարձակալ, մյուս կողմից, այսուհետ միասին անվանվելով՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել **սեփականության իրավունքով** իրեն պատկանող՝ մարզ Շիրակ, համայնք Ամասիա, գյուղ Ամասիա վարչական շենք հասցեում գտնվող անշարժ գույքի՝ վարչական շենքի 2-րդ /երկրորդ/ հարկից ընդհանուր 69.65 /վաթսունինը և վաթսունհինգ/ քմ մակերեսով տարածք /մուտքը և ընդհանուր օգտագործման տարածքներն ընդհանուր օգտագործման իրավունքով/, *այսուհետ՝ Օբյեկտ,* որի նկարագիրը տրված է Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12012012 Վկայականում, հաստատված 31.08.2005թ. /երեսունմեկը օգոստոսի երկու հազար հինգ թվականին/ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից:

1.2 Օբյեկտի հատակագիծը կցվում է սույն պայմանագրին և համարվում է նրա անբաժանելի մասը:

1.3 Սույն պայմանագիրը կնքելու պահին 1.1 կետում նշված Օբյեկտը գրավ դրված չէ, արգելանքի և կալանքի տակ չի գտնվում, **որոշ տարածքներ տրված են վարձակալության և անհատույց օգտագործման, գրանցված սահմանափակումներ չկան,** ինչը հաստատվում է Անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ թիվ ՄՏ-03022020-08-0364 Միասնական Տեղեկանքով, տրված՝ Անշարժ գույքի Կադաստրի կոմիտեի **Շիրակի մարզային ստորաբաժանման** կողմից, որի տվյալները լրացված են 03 փետրվարի 2020թ. դրությամբ:

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ - Գույքի նկատմամբ որևէ հիմքով սեփականության իրավունքի նոր պետական գրանցումը կկատարվի հասցեի վերաբերյալ համապատասխան որոշում ներկայացվելու դեպքում: Թիվ 12012012 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականում գրառված ծածկագրերը համապատասխանեցված են գույքի նկատմամբ իրավունքների պետական միասնական էլեկտրոնային մատյանում լրացված տվյալներին:

2. Վարձավճարը և վճարման կարգը

2.1 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի տարեկան վարձավճարը կազմում է 167.160 /մեկ հարյուր վաթսունյոթ և մեկ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ գումար:

2.2 Վարձակալը սույն պայմանագրի 2.1 կետում նշված Օբյեկտի տարեկան վարձավճարը պարտավորվում է փոխանցել յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը /տասը/:

3. Պայմանագրի գործողության ժամկետը

3.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը Վարձատուն հանձնել է Վարձակալին 01.01.2020թ-ից /մեկը հունվարի երկու հազար քսան թվականից/:

3.2 Սույն պայմանագիրը գործում է մինչև 01.01.2025թ. /մեկը հունվարի երկու հազար քսանհինգ թվականը/:

4. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

4.1 Վարձատուն պարտավոր է՝

4.1.1 Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին:

4.2 Վարձատուն իրավունք ունի՝